

**

Մայրաքաղաքիս մեջ գիշեր ատեն քիթով պտըտիլը վտանգաւոր է: Այս գիշեր թուրք մը Հրեայի մը վրայ յարձակելով կողոպտել ուզեց զայն, բայց խեղճին վրայ փող չը գտնելուն վրայ թուրքը բարկացաւ եւ աղէկ մը ծեծելէն ետքը խեղճ Հրեային քիթը կտրեց ու փախաւ:

Եղելութիւնն ոստիկանութեան իմաց տրուելուն պէս մի ոստիկան չարագործը ձերբակալեց:

Քիթն իւր տիրոջն տրուեցաւ:

Այս արդար դատաստանին ըսելիք ունի՞ք. եթէ գողցուածն դրամ ըլլար՝ հրեայն չէր կրնար դրամն վերստին ձեռք բերել: Թող աղօթք ընէ, որ քիթն էր գողցուածը:

**

2 Յունիս

Ես ալ այսօր համոզուեցայ, որ թատրոնը մեծ մարդերու դպրոց մ'է:

Բայց մեծ մարդիկ ի՞նչ կ'ուսանին այդ դպրոցի մէջ: Խնդիրը հոս է:

Թող ուրիշները պնդեն թէ բարոյականութիւն կ'ուսանին հոն. ես կը պնդեմ, եւ եթէ հարկ լինի՝ երկու տաճիկ վկայ ալ կը բերեմ – որովհետեւ քրիստոնէի վկայութիւնը ընդունելի չէ, – որ թէպէտ եւ բարոյականութիւն դաս կը տրուի հոն, բայց աշակերտները մարմնակազմութեան դաս կ'առնեն, վասնզի հանդիսատեսները դերասանուիւյ մը աւելի թելերուն, պարանոցին, սրունքներուն կը դարձունեն իրենց ուշն քան թէ անոր արտասանած խօսքերուն. եւ եթէ դերասանուիւյ թելերն գեղեցիկ գտնեն՝ կ'ասեն.

–Շատ սքանչելի ներկայացում մ'էր:

Խեղճ հեղինակներ... կը կարծեն թէ իրենց գործը կը ծափահարուի... մինչդեռ շատ անգամ դերասանուիւյ հեղինակն է, որ կը ծափահարուի...

**

Խափանուած «Լրագիր» օրագրոյ խմբագիրն այսօր Տպագրական Տեսչութեան ներկայացաւ եւ հրաման խնդրեց, որ թերթը վերստին հրատարակէ: Տեսուչն աղօթք ընելու գնացած էր: